# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2026թ. թիվ 515-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի 15.07.2026թ. թիվ 185 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի փետրվարի 8-ի «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի մարտի 21-ի թիվ 141-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 58-Ա որոշման հավելվածի «Այլ նեղ մասնագիտական բուժօգնություն և սպասարկում» բաժնում 3-րդ տողից հետո ավելացնել

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Անոթային վիրաբույժի խորհրդատվություն | 1 այց | 6 000 |
| 5 | Ուրոլոգի խորհրդատվություն | 1 այց | 6 000 |
| 6 | Վնասվածքաբան օրթոպեդի խորհրդատվություն | 1 այց | 6 000 |

տողերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-16 14:25:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 16
ք.Վանաձոր